ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46
գ. Գլաձոր, 33փող. 41 շենք

Նիստ թիվ 11 "16" դեկտեմբերի 2017 թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 41
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017Թ. ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 14 - րդ հոդվածի 6-րդ մասի, 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀԱՍՏԱՏԵԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Օրակարգի հաստատման մասին:
2. <<Վայկ Մետալ>> ՍՊԸ-ին հողամաս օգտագործման տրամադրելու մասին:
3. Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Գլաձոր համայնքի ղեկավարի 2017 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 96 որոշումը <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> և ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Գլաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին:
6. Գլաձոր և Ցուխաու համայնքների փոխհամագործակցությանը համաձայնություն տալու մասին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Բացակա
Գաբրիելյան Ա.				
Գասպարյան Ք.				
Գևորգյան Ա.				
Լևոնյան Վ.				
Մանասերյան Կ.				
Մարգարյան Ա.				
Մարգարյան Գ.				
Մարտիրոսյան Մ.				
Սարգսյան Է.				
Սաֆարյան Ե.				
Վարդանյան Գ.				

Համայնքի ղեկավար Ա. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

☎ հեռ. (0281)2-34-46, (0281)2-22-80
գ. Գլաձոր, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 11

«16» դեկտեմբերի 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 42

<<ՎԱՅԿ ՄԵՏԱԼ>> ՍՊԸ-ԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մերժել Գլաձոր համայնքի ղեկավարի առաջարկը՝ թույլ չտալ Գլաձոր համայնքի բազմամետաղային հանքավայրի՝ Գլաձոր համայնքի սեփականությունը հանդիսացող 625 հա կազմող տարածքում ռեգիոնալ բնույթի երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար, «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի հետ կնքելու համաձայնագիր /հողօգտագործման պայմանագիր/ և այդ նպատակով որևէ հողհատկացում չանել :

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Բացակա
Գաբրիելյան Ա.				
Գասպարյան Ք.				
Գևորգյան Ա.				
Լևոնյան Վ.				
Մանասերյան Կ.				
Մարգարյան Ա.				
Մարգարյան Գ.				
Մարտիրոսյան Մ.				
Սարգսյան Է.				
Սաֆարյան Ե.				
Վարդանյան Գ.				

Համայնքի ղեկավար Ա. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

☎ հեռ. (0281)2-34-46, (0281)2-22-80
գ. Գլաձոր, 33փող., 41 շենք

Նիստ թիվ 11 «16» դեկտեմբերի 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 43-Ա

ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N-*1* հավելվածի.

2. Ուժը կորցրած ճանաչել Գլաձոր համայնքի ավագանու 2016 թվականի <<Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 43 որոշման N-1 և N-2 հավելվածները:

3. Առաջարկել Գլաձոր համայնքի ղեկավարին՝ Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Բացակա
Գաբրիելյան Ա.				
Գասպարյան Ք.				
Գևորգյան Ա.				
Լևոնյան Վ.				
Մանասերյան Կ.				
Մարգարյան Ա.				

Մարգարյան Գ.				
Մարտիրոսյան Մ.				
Սարգսյան Է.				
Սաֆարյան Ե.				
Վարդանյան Գ.				

Համայնքի ղեկավար՝ Ա. Մովսիսյան

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզի

Գլաձոր համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 16-ի N 43-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 25 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1	Համայնքի ղեկավար	1	380000
2	Տեղակալ	1	250000
3	Օգնական	1	230000
4	Գետափ բնակավայրի վարչական ղեկավար	1	220000
5	Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար	1	200000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
6	Աշխատակազմի քարտուղար	1	230000
7	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	200000
8	Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	170000
9	Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	170000
10	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	110000
11	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	110000
12	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	110000
13	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
14	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	110000
15	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	110000
16	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ			

17	Մշակութային միջոցառումների կազմակերպիչ	2	80000
18	Անասնաբույժ	2	78000
19	Սպորտային միջոցառումների կազմակերպիչ	0.5	80000
20	Պարուսույց	1	120000
21	Հավաքարար	3	78000
Ընդամենը		**24.5**	**3.490.000**

Համայնքի ղեկավար Ա.Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳԼԱՋՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

☎ հեռ. (0281)2-34-46, (0281)2-22-80
գ. Գլաձոր, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 11 «16» դեկտեմբերի 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 44-Ա

ԳԼԱՋՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի << <<ԳԼԱՋՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 96 ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի պահանջով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել՝

1. Գլաձոր համայնքի ղեկավարի 2017 թ. դեկտեմբերի 15-ի <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին թիվ 96 որոշումը:
2. <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝

համաձայն հավելվածի:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Բացակա
Գաբրիելյան Ա.				
Գասպարյան Ք.				
Գևորգյան Ա.				
Լևոնյան Վ.				
Մանասերյան Կ.				
Մարգարյան Ա.				
Մարգարյան Գ.				
Մարտիրոսյան Մ.				
Սարգսյան Է.				
Սաֆարյան Ե.				
Վարդանյան Գ.				

Համայնքի ղեկավար Ա. Մովսիսյան

Քննարկվել, խմբագրվել և հաստատվել է

Գլաձորի համայնքի ավագանու

2017թ. դեկտեմբերի 16-ի թիվ 11 նիստում

որոշում թիվ 44-Ա

Գլաձոր համայնքի ղեկավար՝

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

<<ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2017թ.-

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է համայնքի տնտեսությունը սպասարկելու նպատակով:
2. Այն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքներով Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:
3. Կազմակերպությունը ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված գործառույթներ, ստանձնում է անհրաժեշտ իրավուներ և պարտականություններ: Կազմակերպության հիմնադիրն է Գլաձորի համայնքապետարանը: Կազմակերպության գտնվելու վայրն է՝ 22 Վայոց ձորի մարզ, հ. Գլաձոր. 33 փողոց, 41 շենք:
4. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման այլ միջոցներ:
5. Կամակերպության անվանումն է՝

Հայերեն - <<ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Կրճատ- <<ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ

Ռուսերեն՝ <<ГЛАДЗОРИ АМАЙНКАЙИН ТНТЕСУТЮН>> муниципальная некоммерческая организация

Կրճատ - << ГЛАДЗОРИ АМАЙНКАЙИН ТНТЕСУТЮН >>, МНО.

Անգլերեն- << GLADZORI HAMAYNQAYIN TNTESUTYUN >> municipal non-commercial organization

Կրճատ- <<GLADZORI HAMAYNQAYIN TNTESUTYUN>>, MNO.

6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմանդրի որոշմամբ:

8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է համայքնի տնտեսության սպասարկումը:

11. Կազմակերպությունն իր գործունեության նպատակներին համապատասխան կազմակերպում է

ա. համայնքի աղբահանությունը, ջրամատակարարման կազմակերպումը և արոնենտային վճարների գանձում,

բ. փողոցների, հրապարակների, այլ տարածքների սանիտարական մաքրումը,

գ. համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը և դրանց նորոգումը,

դ. փողոցների լուսավորման համակարգերի պահպանումը, նորոգումը ու սպասարկումը,

ե. հուշարձանների, պատմամշակութային արժեքների տարածքների պահպանումը և բարեկարգումը,

զ. ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման և այլ կառուցվածքների շահագործումը և վերանորոգումը,

է. համայքային աղբավայրերի սպասարկումը,

ը. բնակավայրերի բարեկարգումը, կանաչապատումը և կանաչ տարածքների պահպանման աշխատանքները,

թ. համայքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման, կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների և ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը,

ժ. գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները,

ի. հիմնադրի որոշմամբ համայնքային տնտեսության պահպանման այլ ծառայություններ:

12. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվում է հիմնադրի որոշմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

14. Համայնքի բյուջեով ուղղակի նախատեսված միջոցների սահմաններում մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է գնումների կատարման բանակցային ընթացակարգով, սակայն գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

Կազմակերպության կողմից համայնքային այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ գնվել << Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

3.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

15. Կազմակերպության կառավարումը իրականացնում են հիմնադիրը իր կողմից նշանակված գործադիր մարմնի կազմակերպության տնօրենի միջոցով այսուհետ տնօրեն,

16. Կազմակերպության հիմանդիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

17. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա. Կազմակերպության հիմանդրումը կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

բ. Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ. Կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և կամ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

դ. Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

ե. Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

զ. Կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

է. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը,

18. Համայնքի ղեկավարը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

19. Համայնքի ղեկավարը.

Ա. Նշանակում և ազատում է Կազմակերպության տնօրենին, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է մեկ կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

Բ. Վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ,

գ. Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում տնօրենին, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ. Լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

ե. Վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ. Համայնքի ավագանու որոշմամբ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության համար,

է. Հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և հաշվեկշիռը,

20. Տնօրենը՝

Ա. Իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը,

Բ. Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի ավագանու որոշումներով սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայքնի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

21. Տնօրենը՝

Ա. Առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ,

Բ. Սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

Գ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

Դ. Տալիս է կազմակերպության անունից իսկական գալու լիազորագրեր,

Ե. Աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

Զ. Բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

Է. Կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատակիցների միջև,

Ը. Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

Թ. իրականացնում է կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում մասնագիտական մակարդակի բարձրացման համար,

Ժ. վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների նկատմամբ,

Ժա. ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

Ժբ. կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հաստատման,

Ժգ. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

22. Տնօրենի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի գրավոր որոշման (կարգադրության) համաձայն նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

23. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրերով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

24. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմանդրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

25. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

26. Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

27. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

28. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

29. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

30. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի կամ կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

31. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպության ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

32. Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

33. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

34. Կազմակերպությունը ֆինանսավորում է հիմանդիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

35. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա. Հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած միջոցները,

բ. Բարեգործական նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,

գ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

36. Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

37. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

☎ հեռ. (0281)2-34-46, (0281)2-22-80
գ. Գլաձոր, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 11

«16» դեկտեմբերի 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ՝ ԹԻՎ 45-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Գլաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Գլաձոր համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 08-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Գլաձոր համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» N 18 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1 -ից:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Բացակա
Գաբրիելյան Ա.				
Գասպարյան Ք.				
Գևորգյան Ա.				
Լևոնյան Վ.				
Մանասերյան Կ.				
Մարգարյան Ա.				
Մարգարյան Գ.				
Մարտիրոսյան Մ.				
Սարգսյան Է.				
Սաֆարյան Ե.				
Վարդանյան Գ.				

Համայնքի ղեկավար Ա. Մովսիսյան

Հավելված
ՀՀ Վայոց ձոր մարզի Գլաձոր համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 16 -ի N 45-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Գլաձոր համայնքի (այսուհետև՝ համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

1) համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը.

2) պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը.

3) համայնքի հանրակրթական դպրոց(ներ)ի գործունեության աջակցումը.

4) զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը.

6) միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:

3. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

1) միջոցներ են ձեռնարկում զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.

2) աջակցություն են ցուցաբերում միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի վճարման կազմակերպմանը.

3) նպաստում են համայնքի հանրակրթական դպրոց(ներ)ի գործունեության կազմակերպմանը.

4) տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:

4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 2 -%-ը:

5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների և (կամ) համաձայնության առկայության դեպքերում:

6. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական և գույքային միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

7. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը (այսուհետ՝ նախաձեռնող) համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

10. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 9-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

11. Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները կարող է ավագանուն ուղղված դիմումը ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

12. Համայնքի ավագանին սույն կարգով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է միայն սույն կարգի 13-րդ կետում նշված սոցիալական օգնության տրամադրման հանձնաժողովի եզրակացության դեպքում և քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13.Համայնքի ավագանին զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչներ, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14.Համայնքի սոցիալապես անապահով բնակչի հուղարկավորության կազմակերպման համար օգնության տրամադրման համար համայնքի ղեկավարը կարող է իր որոշմամբ նրա ընտանիքին հատկացնել մինչև 30000 /երեսուն հազար/ դրամի սոցիալական օգնություն և այդ մասին հաղորդում է ներկայացնում ավագանու առաջիկա նիստում, որը ավագանու կողմից ընդունվում է որպես ի գիտություն:

15. Համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ավագանին կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

16.Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումները մշտական գործող հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո, տալիս է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն, նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:

17. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

1) համայնքի բնակիչ հանդիսանալը.

2) սոցիալապես անապահով ընտանիք հանդիսանալու վերաբերյալ սոցիալական օգնության տրամադրման մշտական գործող հանձնաժողովի դրական եզրակացությունը.

3) համայնքի բնակիչ հանդիսանալը. սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը.

4) համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ համատեղ տնտեսություն չվարելը:

18. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 100000/մեկ հարյուր հազար/ դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամներին:

19. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան մեկ անգամ՝ ոչ ավելի քան տարեկան ուսման վարձի 50%-ի չափով: Ուսման վարձի հատկացում չի արվում համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն:

20.Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե՝ համայնքի ղեկավարի անձնական միջոցներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում են միայն ավագանու որոշմամբ:

ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. Օրդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46
գ. Գլաձոր, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 11 *«16» դեկտեմբերի 2017 թ*

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 46

ԳԼԱՁՈՐ ԵՎ ՅՈՒԽԱՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի պահանջով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Գլաձոր համայնքի փոխհամագործակցությանը Գերմանիայի Դաշնության Սաքսոնական Անհալթ երկրամասի Յուխաու համայնքի հետ:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Բացակա
Գաբրիելյան Ա.				
Գասպարյան Ք.				
Գևորգյան Ա.				
Լևոնյան Վ.				
Մանասերյան Կ.				
Մարգարյան Ա.				
Մարգարյան Գ.				
Մարտիրոսյան Մ.				
Սարգսյան Է.				
Սաֆարյան Ե.				
Վարդանյան Գ.				

Համայնքի ղեկավար Ա. Մովսիսյան